ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՆՈՐԱՅՐ ՎԱՐՈՒԺԱՆԻ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԷՎՈԼՅՈՒՑԻՈՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԺԲ.00.01 - «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2024

РОССИЙСКО-АРМЯНСКИЙ УНИВЕРСИТЕТ
СТЕПАНЯН НОРАЙР ВАРУЖАНОВИЧ

АКТУАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ ФОРМИРОВАНИЯ И ЭВОЛЮЦИОННОГО РАЗВИТИЯ ОРГАНОВ ПРАВОСУДИИ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.01 - «Теория и история государства и права, история государственных и правовых учений»

ЕРЕВАН – 2024

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում

Գիտական ղեկավար՝ Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Գառնիկ Հրաչիկի Սաֆարյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Իրավաբանական գիտությունների դոկտոր,պրոֆեսոր **Հովհաննես Միքայելի Ստեփանյան**

Իրավաբանական գիտությունների թեկնածու **Լիանա Մալխասի Մալխասյան**

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվ.համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2024 թվականի նոյեմբերի 13-ին ժ.15.^{00}-ին Հայ-Ռուսական համալսարանում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի Իրավագիտության 063 մասնագիտական խորհրդի նիստում (0051,ք. Երևան, Հովսեփ Էմին 123):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-ռուսական համալսարանի գիտական աշխատողների գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 2024 թվականի հոկտեմբերի 11-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝

Իրավաբանական գիտությունների թեկնածու **Ջ.Հ.Հայրապետյան**

Тема диссертации утвервждена в Институте философии, социологии и права НАН РА

Научный руководитель: доктор юридических наук,профессор **Сафарян Гарник Грачикович.**

Официальные оппоненты: доктор юридических наук, **Степанян Ованнес Микаелович**

кандидат юридических наук, **Малхасян Лиана Малхасовна**

Ведущая организация: **Ереванский университет им. Месропа Маштоца**

Защита состоится 13 ноября 2024 г. 15^{00} часов на заседании специализированного совета 063 по Юриспруденции КВОН РА при Российско-Армянском университете (г. Ереван,0051, Овсепа Эмина 123).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки РАУ.

Автореферат разослан 2024 г. 11 октября.

Ученый секретарь специализированного совета

кандидат юридических наук **Дж. А.Айрапетян**

Աշխատանքի ընդհանուր բնութագիրը

Հետազոտության թեմայի արդիականությունը: Սույն ատենախոսական աշխատանքի արդիականությունը մեծապես պայմանավորված է արդարադատության արդյունավետության բարձրացմամբ և մարդու իրավունքների պաշտպանության առավել հուսալի ինստիտուտների ու ընթացակարգերի կատարելագործման անհրաժեշտությամբ:

Արդարադատության ինստիտուտին առնչվող հարցադրումների գիտական հետազոտության արդիականության մասին են վկայում նաև օրինականության ամրապնդման և կոռուպցիայի դեմ պայքարի գործընթացում հիշյալ ինստիտուտի կատարելագործման անհրաժեշտությամբ պայմանավորված խնդրահարույց հարցերի առկայությունը:

Հիշյալ հարցադրումների նկատմամբ տեսական և պրակտիկ հետաքրքրությունն էապես աճել է այն նկատառումով, որ արդարադատության արդյունավետության նոր որակի բարձրացումը պայմանավորված է նաև Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությամբ[1], որում մասնավորապես նշված է, որ անհարժեշտ է համակարգված միջոցառումներ իրականացնել ուղղված դատական համակարգի անկախության, անկողմնակալության և դատական համակարգի նկատմամբ հասարակության վստահության բարձրացմանը, դատարանների ծանրաբեռնվածության թեթևացմանը, նյութական և դատավարական օրենսդրության բարելավմանը, էլեկտրոնային արդարադատության միասնական կառավարման համակարգի ներդրմանը և այլ անհրաժեշտ միջոցառումներ, որոնք էապես կնպաստեն ՀՀ դատաիրավական համակարգի կատարելագործման ու զարգացման համար:

Այդ միջոցառումների շարքին անհրաժեշտ է դասել նաև գիտական-տեսական համակողմանի և համալիր հետազոտական աշխատանքների իրականացումը, որոնցում պետք է արտացոլվեն գիտականորեն հիմնավորված առաջարկություններ՝ արդարադատության բարելավման և արդյունավետության բարձրացման համար:

[1] Ընդունվել է ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 21-ի №1133-Լ որոշմամբ:

Վերոնշվածով է պայմանավորված թեմայի ընտրությունը և հետազոտության արդիականությունը:

Թեմայի գիտական մշակվածության աստիճանը: Արդարադատության հայեցակարգը որպես ժողովրդավարական մշակույթի հատկանիշ, եղել և մնում է գիտական և քաղաքական հետաքրքրությունների ուշադրության կենտրոնում:

Արդարադատության իդեալի սոցիալական նշանակությունը պայմանավորում է դրա շուրջ քննարկումների սրությունն ու ինտենսիվությունը: Փիլիսոփայության պատմությունը, կրոնական գաղափարները, էթիկան, գեղագիտությունը, իրավունքը, տնտեսական դոկտրինները տալիս են արդարության և արդարադատության դիտարկման բազմաթիվ հասկացություններ և մոտեցումներ:

Արդարադատության՝ որպես սոցիալական արժեքի մասին առաջին գաղափարների առաջացումը կապված է այնպիսի հին մտածողների հետ, ինչպիսիք են Սոկրատեսը, Կոնֆուցիոսը, Պլատոնը, Արիստոտելը, Ցիցերոնը և այլն: Նրանց ուսմունքներում արդարադատությունը դիտարկվում է էթիկական առումով որպես հանրային և մասնավոր շահերի համադրման և լուծման գործիքակազմ: Նոր ժամանակներում ձևավորվում է ազատական հայեցակարգ՝ կենտրոնանալով արդարադատության իրավական ասպեկտների վրա (Ժ. Ժ. Ռուսո, Թ.Հոբս և ուրիշներ): Դասական գերմանական փիլիսոփայության մեջ արդարադատությունը կապված է բարոյական պարտքի կատարման, անհատական և սոցիալական շահերի ներդաշնակության հետ (Ի. Կանտ, Ի.Գ. Ֆիխտե, Գ.Վ.Հեգել):

Արդարության և արադարադատության ժամանակակից արևմտյան տեսություններից (Ռ. Նոզիկ, Ջ. Ռոլս, Ռ. Դվորկին) ամենահայտնին Ջ. Ռոլսի «Արդարության տեսություն» աշխատությունն է, որտեղ արդարությունը դիտվում է որպես քաղաքական արժեք և դրա օգտագործումն հիմնավորված է արդարության սկզբունքը որպես արդարադատության իրականացման հիմնական չափանիշ և գործիքակազմ: Արդարադատության էթիկական ասպեկտները հատուկ

վերլուծության առարկա են դարձել Ջ. Հաբերմասի, Ռ. Հայեկի, Ա. Մաքինթայրի և այլոց աշխատություններում:

Արդարադատության մասին ուսմունքը Հայաստանում մշակվել է դեռևս միջնադարյան հայ մտածողների կողմից, ինչպիսիք են Սահակ Պարթևը, Եզնիկ Կողբացին, Դավիթ Անհաղթը, Գրիրգոր Նարեկացին, Ներսես Շնորհալին, Մխիթար Գոշը, Ամբատ Սպարապետը և այլք: Նոր և Նորագույն ժամանակներում հայ մտածողներ Միքայել Նալբանդյանը, Գրիգոր Զոհրապը, Քալանթարը մեծ ուշադրություն են դարձրել արդարության և արդարադատության հարցերին:

Խորհրդային և հետխորհրդային շրջանի իրավունքի և փիլիսոփայության մեջ զգալի ուշադրություն է դարձվել արդարադատության խնդրին: Դրա սոցիալ-փիլիսոփայական կողմը ներկայացված է Լ. Գ. Գրիևբերգի, Տ. Ն. Զասլավսկայայի, Ա. Գ. Զդրավոմիսլովի, Գ. Բ. Սվյատոխինայի և Ա. Գ. Գրյազնովայի, Վ. Մ. Մեժուևի, Ա. Մ. Ռուտկևիչի, Ֆ. Ի. Շամխալովի, Տ. Ա. Ալեքսեևայի, Ռ.Մ. Գաբիտովայի, Բ.Ն. Կաշնիկովի, Վ.Ս. Ներսեսյանցի, Ռ.Ի. Սոկոլովայի և այլոց աշխատություններում:Արդարադատությունը որպես իրավական կատեգորիա ուսումնասիրել են Վ. Ա. Բաչինինը, Ս. Ի. Գրիգորիևը, Վ. Ն. Կուդրյավցևը, Գ. Ֆ. Մալցևը, Ե.Յու. Սոլովյովը և այլք, որպես էթիկական կատեգորիա՝ Ռ. Գ. Ապրեսյանի, Զ. Ա. Բերբեշկինայի, Գ. Ն. Գումնիցկու, Ա. Ա. Հուսեյնովի, Օ. Գ. Դրոբնիցկիի և այլոց կողմից: Այս ուսումնասիրությունների արդյունքում արդարադատություն հասկացությունը ստացավ լիարժեք սոցիալ-փիլիսոփայական և իրավական կատեգորիայի կարգավիճակ, բացահայտվեց դրա բարդ բնույթը և սոցիալական նշանակությունը:

Արդարադատության հետ կապված որոշ հիմնարար բնույթի խնդիրներ՝ արդարության իդեալները, սոցիալական արդարության գաղափարը, արդարադատության իրավական ասպեկտները բացահայտվել են Ս.Ս. Ավետիսյանի, Գ.Ս. Ղազինյանի, Ս. Դիլբանդյանի, Գ. Գ. Հարությունյանի և այլոց աշխատություններում:

Չնայած արդարադատության խնդրի նկատմամբ կայուն հետաքրքրությանը և մոտեցումների բազմազանությանը, մեր կարծիքով արդարադատության՝ որպես սոցիալ-իրավական համակարգի հատկանիշների ամբողջական և համալիր վերլուծություն չի կատարվել, լիարժեք չեն բացահայտվել արդարադատության հայեցակարգի ընդհանուր իմաստն ու բովանդակությունը, ինչպես նաև դրա կատարելագործման հիմնական ուղենիշներն արդի ժամանակաշրջանում:

Հավուր պատշաճի գնահատելով վերոնշված գիտնականների աշխատությունները խնդրո թեմայի վեարբերյալ, այդուհանդերձ գտնում ենք, որ սույն հետազոտությունը, լինելով համակարգված ու ամբողջական գիտական ուսումնասիրություն, իր որոշակի ներդրումը կունենա քննարկվող թեմայի ամբողջական ու լիարժեք մշակման գործում:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակն է ուսումնասիրել արդարադատության մարմինների էվոլյուցիոն զարգացման և արդիական հիմնախնդիրները: Նշված նպատակին հասնելու համար հեղինակի կողմից առաջադրվել են հետևյալ **խնդիրները.**

-ուսումնասիրել արդարադատության էվոլյուցիոն զարգացման ուղենիշները.

--բացահայտել արդարադատության հասկացությունը, էությունը, հայեցակարգային մոտեցումները,

-վերլուծել արդարադատության սոցիալական և իրավական առումները,

-ուսումնասիրել արդարադատության ժամանակակից ընկալումները արդի դարաշրջանում,

-հիմնավորել «էլեկտրոնային արդարադատության» ներդրման անհրաժեշտությունը,

-հիմնավորել արդարադատության առանձին տեսակների վճռաբեկության կարգով սահմանափակումները,

-վերլուծել արդարադատության արդի մարտահրավերները և զարգացման հեռանկարները:

Ուսումնասիրության օբյեկտը և առարկան: Ուսումնասիրության **օբյեկտն է** արդարադատությունը, իսկ **առարկան՝** արդարադատության կատարելագործման

տեսական և գործնական խնդիրները, ինչպես նաև արդարադատության արդյունավետության բարձրացման հիմնական ուղիները:

Ուսումնասիրության մեթոդաբանական հիմունքները: Որպես ատենախոսության ընդհանուր մեթոդաբանական հիմք օգտագործվել է դիալեկտիկական մեթոդը, որը թույլ է տալիս բացահայտել ընդհանուրի և հատուկի, վերացականի և կոնկրետի փոխհարաբերությունները արդարադատության՝ որպես սոցիալական երևույթի հայեցակարգում: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել համապարփակության սկզբունքին, որը ներառում է ուսումնասիրվող օբյեկտի կապերի և համակարգաստեղծ հարաբերությունների ամբողջության մեջ, ինչը թույլ կտա կառուցել տրամաբանորեն փաստարկված և գիտականորեն հիմնավորված տեսություն՝ արդարադատության, նրա խնդիրների և նպատակների վերաբերյալ:

Հետազոտության ընթացքում կիրառվել են նաև համեմատական և համակարգային վերլուծության մեթոդները: Հասարակության և պետության զարգացման դինամիկայի մեջ արդարադատության ուսումնասիրության իրավաբանական վերլուծության մեթոդը լրացվում է տրամաբանականով՝ սահմանումներ ձևակերպելու, արդարադատության էությունը և բովանդակությունը բացահայտելու հարցերում:

Գիտական նորույթը: Աշխատանքի գիտական նորույթը կայանում է նրանում, որ համակողմանի և համակարգային ուսումնասիրության են ենթարկվել արդարադատության ինստիտուտի էությունը, բովանդակային առանձնահատկությունները, ժամանակակից հայեցակարգային մոտեցումները, արդյունավետության բարձրացման խնդիրները դատահիրավական բարեփոխումների համատեքստում: Աշխատանքում հեղինակը հիմնավորել է «էլեկտրոնային արդարադատության» ներդրման անհրաժեշտությունը դատական իշխանության համակարգում, ինչպես նաև արդարադատության առանձին տեսակների գործերով վճռաբեկության սահմանափակման հիմնավորումները, ինչպես նաև բացահայտել է արդարադատության արդիական մարտահրավերները

և խնդիրները և ուրվագծել է դրանց համարժեք լուծման ուղիները: Հեղինակը նաև համակարգված վերլուծության է ենթարկել արդարադատության արդյունավետության բարձրացման հետ կապված տեսական և կիրառական խնդիրները և ստացված արդյունքների հիման վրա ձևակերպել է կոնկրետ առաջարկություններ այդ ուղղությամբ:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթներն են.

1.Արդարադատության ժամանակակից հասկացությունն անվերապահորեն առնչվում է դատարանի և դատական իշխանության ինստիտուտի հետ, որն առաջացել է առաջին պետականությունների կազմավորման հետ և կոչված էր ապահովելու անհատի ամենատարրական իրավունքները: Առանց վարանելու կարելի է պնդել, որ բացառապես դատական իշխանության միջոցով արդարադատության իրականացումը քաղաքական-իրավական մշակույթի նվաճումներից է, ինչին հնարավոր է եղել հասնել հազարամյա սոցիալական էվոլյուցիայի արդյունքում:

2.Դարեր շարունակ արդարադատությունը բնավ իր խնդիրը չի համարել խախտված իրավունքների վերականգնումը և արդար դատական քննության իրավունքի ապահովումը, արդարադատությանը վերապահված է եղել այն դերակատարումը, որպեսզի ծառայի և ամրապնդի իշխող քաղաքական էլիտայի իշխանությունը: Դատարանի և արդարադատության այդպիսի դերակատարումը ներկայումս դիտարկում ենք ավտորիտար քաղաքական համակարգերում: Սակայն ժողովրդավարական իրավական հասարակարգերում արդարադատությունը դիտարկվում է որպես պետական իշխանության առանցքային գործառույթ, որի հիմնական առաքելությունն է պաշտպանել մարդու և քաղաքացու իրավունքներն ու օրինական շահերը, վերականգնել սոցիալական արդարությունը,իրականացնել վերահսկողական և նորմաստեղծ գործառույթներ:

3. Ժամանակակից արդարադատությունը առանձնանում է իրեն բնորոշ բնութագրական հատկանիշներով և կոչված է պոզիտիվ իրավունքի նորմերի և սկզբունքների ազգային բարձր դատական ատյանների և միջազգային

դատարանների իրավական դիրքորոշումների, իսկ անհրաժեշտության դեպքում նաև բանականության հիման վրա լուծել սոցիական վեճերը:

4. Արդարադատության առաքելությունը ոչ միայն սոցիալ-իրավական վեճերի լուծումն է, այլևս սոցիալական արդարության ապահովումը իր իրավասության սահմաններում, իրավական բացերի լրացումը և իրավական անորոշումների վերացումը՝ ազատ հայեցողության և ողջախոհության սահմաններում:

5. Հայաստանում դատական իշխանության բարեփոխումների անցկացման և կայացման ժամանակակից փորձը հետաքրքրական փաստացի նյութ է տրամադրում գիտական վերլուծության համար: Արդարադատության օրենսդրական փոփոխությունները ձևավորել են Հայաստանում դատական իշխանության ժամանակակից տիպի կայացման իրավական հիմքերը: Միաժամանակ չի կարելի հաշվի չառնել, որ օրենսդրական փոփոխություններին զուգահեռ շարունակում է գոյություն ունենալ «հին պոզիտիվիստական իրավագիտակցությունը», ինչը ըստ իր բնույթով խիստ պահպանողական է և փոփոխվում է առավել դանդաղ, քան օրենսդրությունը և անցումային հասարակության շարունակական աճող պահանջմունքները:

Այս առումով, գտնում ենք, որ անհրաժեշտ է լեգիստական իրավամտածողությունը փոխարինել ժամանակի պահանջմունքներին համահունչ «իրավաբանական» մտածողությամբ՝ բառիս լայն իմաստով՝ ներառելով ոչ միայն գործող պոզիտիվ նորմերը, այլև իրավունքի հանրաճանաչ սկզբունքները, իրավական դիրքորոշումները, բարոյականության և բանականության «իմպերատիվ» նորմերը:

6. Արդարադատության միջոցով դատական իշխանությունը իրականացնում է երկու բացառիկ գործառույթներ 1) քննում և լուծում է գործն ըստ էության, 2) իրականացնում է պետական իշխանության այլ ճյուղերի պաշտոնատար անձանց և մարմինների, ստորադաս դատական մարմինների գործողությունների (անգործության) որոշումների օրինականության նկատմամբ դատական վերահսկողություն: Դատական վերահսկողությունը այն կարևոր գործառույթներից է, որի արդյունավետ

իրականացմամբ է պայմանավորված իրավական պետության կայացումը մեր երկրում: Հետևաբար, դատական վերահսկողության գործառույթը ուղղակի դատարանի իրավասությունների ընդարձակում չէ, այլ լիազորությունների վերաբաշխում դատարանի և պետության այլ մարմինների միջև: Դա դատական իշխանության սկզբունքային նոր դիրքորոշում է պետական իշխանության համակարգում և այն նյութական բովանդակություն է ստանում արդարադատության պրակտիկայում:

7.Աշխատանքում հիմնավորվում է այն դիրքորոշումը, որ «իրավունք» և «արդարադատություն» իրավական կատեգորիաները դիտարկվում են որպես իրավական զույգ կատեգորիաներ, սակայն ոչ միայն որպես «համատեղ կիրառվող», այլ նաև ուղիղ և հետադարձ կապուղիներով փոխկապված իրավական երևույթներ: Ըստ էության, «իրավունքը» և «արդարադատությունը» ոչ միայն զուտ իրավական երևույթներ են, այլ նաև պետության իրավական (նորմատիվ) քաղաքականության արդյունք և «գործում» են պետության անունից: Հետևաբար, դրանք նաև պետաիրավական միասնական գործիքակազմ է՝ հասարակությունը իրավական մեթոդներով կառավարելու համար:

Ատենախոսության նորմատիվ հիմքն են կազմում ՀՀ Սահմանադրությունը, ՀՀ Դատական օրենսգիրքը, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը, ինչպես նաև դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությունը:

Աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը: Ատենախոսության մեջ ամրագրված տեսական դրույթները և եզրակացությունները թույլ են տալիս խորացնել գիտելիքները և պատկերացումները արդարադատության էության և բովանդակային առանձնահատկությունների մասին:

Ատենախոսության հիմնադրույթները կարող են օգտագործվել դատական իշխանության մարմինների համակարգի կատարելագործման և արդարադատության արդյունավետության բարձրացման գործում:

Աշխատանքի կառուցվածքը պայմանավորված է հետազոտության նպատակով և առաջադրված խնդիրներով: Ըստ այդմն էլ աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից և դրանցում ներառված ութ ենթագլուխներից, ամփոփումից և օգտագործված գրականության ցանկից:

Աշխատանքի փորձարկումը. Աշխատանքը կատարվել է ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի պետաիրավական հետազոտությունների բաժնում, որտեղ կայացվել է նաև ատենախոսության քննարկումը և երաշխավորումը հրապարակային պաշտպանության:

Հետազոտության արդյունքների հիմնավորվածությունը, օբյեկտիվությունը և արժանահավատությունը. Ատենախոսական աշխատանքում ստացված արդյունքները հիմնավորվում են արդարադատության վերաբերյալ ազգային և միջազգային նորմատիվ և նյութերի մասնագիտական գրականության քննական վերլուծությամբ, ինչպես նաև դատաիրավական բարեփոխումների հայեցակարգերի համադրման ու իրավահամեմատական համակողմանի քննարկումների և վերլուծությունների արդյունքով:

Աշխատանքի հիմնական բովանդակությունը. Ներածությունում հիմնավորվում է հետազոտության գիտական ուսումնասիրության վիճակը, հետազոտության օբյեկտը և առարկան, նպատակն ու խնդիրները, մեթոդաբանության հիմունքները, գիտական նորույթը և պաշտանության ներկայացվող դրույթները, աշխատանքի գիտական և գործնական նշանակությունը:

Աշխատանքի առաջին գլուխը՝ **«Արդարադատության տեսական հայեցակարգային և մեթոդաբանական առումները»** վերտառությամբ, բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին գլխի առաջին ենթագլխում՝ **«Արդարադատությունը որպես էվոլյուցիոն զարգացման արդյունք և դրա էական հատկանիշները»** վերնագրով, հանգամանորեն վերլուծվել են արդարադատության էվոլյուցիոն զարգացման հիմնական ուղենիշները, ինչպես նաև բացահայտվում են արդարադատության հիմնական հատկանիշները:

Արդարադատության ժամանակակից հասկացությունն անվերապահորեն առնչվում է դատարանի և դատական իշխանության ինստիտուտի հետ, որն առաջացել է առաջին պետականությունների կազմավորման հետ և կոչված էր ապահովելու անհատի ամենատարրական իրավունքները: Առանց վարանելու կարելի է պնդել, որ բացառապես դատական իշխանության միջոցով արդարադատության իրականացումը քաղաքական-իրավական մշակույթի նվաճումներից է, ինչին հնարավոր է եղել հասնել հազարամյա սոցիալական էվոլյուցիայի արդյունքում:

Համաշխարհային իրավական տարածքում պետությունների ինտեգրման ընթացակարգերն օբեկտիվորեն ենթադրում են, մի կողմից, արդարադատության տարբեր մեդելների ունիֆիկացման, մյուս կողմից, բազմամյա իրավակիրառ փորձով ստուգված արդարադատության ազգային առանձնահատկությունների պահպանման անհրաժեշտությունը:

Աշխատանքի առաջին գլխի երկրորդ ենթագլխում «**Արդարադատությունը որպես սոցիալական երևույթ. իրականի ու պատշաճի միջև»** վերնագրով, բացահայտվում է արդարադատության էությունը, նրա իրականի և պատշաճի միջև առկա փոխթափանցումները: Արդարադատությունը որպես դատական իշխանության կարևորագույն գործառույթ իրական է ազգային իրավական համակարգում իր խոցելի և դրական կողմերով: Սակայն ըստ պատշաճի արդարադատությունը, դեռևս լինելիության և կայացման փուլում է: Ըստ «պատշաճի արդարադատություն», հեղինակի կարծիքով, դա իրականում արդար դատաքննություն, կոռուպցիոն ռիսկերից զուրկ, բարձր իրավագիտակցության դատական կորպուսի առկայությունն

է, որին է ուղղված ներկայիս դատաիրավական բարեփոխումների ռազմավարությունը և պետական քաղաքականությունը:

Աշխատանքի երկրորդ գլուխը՝ **«Արդարադատությունը որպես իրավունքը գործողության մեջ»** վերտառությամբ բաղկացած է երեք ենթագլխից:

Երկրորդ գլխի առաջին ենթագլխում՝ **«Արդարադատություն և իրավունքը որպես զույգ կատեգորիաներ»** վերնագրով, աշխատանքում տեսական և գործնական առումով համակողմանի հետազոտվում է «իրավունք» և «արդարադատություն» զույգ կատեգորիաները ինտեգրատիվ և պոզիտիվիստական իրավահասկացման տեսանկյունից: Այս տեսանկյունից «իրավունքը» և «արդարադատությունը» դիտարկվում են որպես «բարության և արդարության» նորմատիվ իրավական արտացոլում և՛ տեսական, և՛ գործնական-կիրառական առումով:

Աշխատանքի երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ **«Արդարադատության ժամանակակից ընկալումը»** վերնագրով, համակողմանի վերլուծության է ենթարկվում արդարադատության հասկացության բազմաթիվ մոտեցումները և հանգում է հետևյալ հեղինակային սահմանմանը. արդարադատությունը խախտված օրինական շահերի և իրավունքների վերականգնման և պաշտպանության նպատակներով ըստ դատական գործերի քննության՝ իրավակիրառ, ընդդատական գործունեություն է, որն ընթանում է օրենքով սահմանված դատավարական պատշաճ ընթացակարգով:

Աշխատանքի երկրորդ գլխի երրորդ ենթագլխում՝ **«Արդար դատաքննությունը որպես արդարադատության իրականացման պատշաճ ընթացակարգ»** վերնագրով, հեղինակը բացահայտում է արդար դատաքննության էությունը, նրա բովանդակային առանձնահատկությունները: Արդար դատաքննությունը ենթադրում է կողմերի իրավահավասարության, արդարության սկզբունքի անշեղ պահպանում և կողմերի օրինակիան իրավունքների և շահերի պահպանում:

Աշխատանքի երրորդ գլուխը՝ **«Արդարադատության կատարելագործամն ուղղությունները դատական և իրավական բարեփոխումների ռազմավարության համատեքստում»** վերտառությամբ բաղկացած է երեք ենթագլխից:

Երրորդ գլխի առաջին ենթագլխում՝ **«ՀՀ դատական համակարգում «էլեկտրոնային արդարադատության» ներդրման խնդիրը»** վերնագրով, հեղինակը հիմնավորում է, այսպես կոչված, «էլեկտրոնային արդարադատության» ներդրման անհրաժեշտությունը ՀՀ դատական մարմինների համակարգում:

Երրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ **«ՀՀ վճռաբեկ դատարանի գործառութային լիազորությունների և սահմանադրաիրավական կարգավիճակի հիմնախնդիրները դատաիրվական և սահմանադրական բարեփոխումների համատեքստում»** վերնագրով, հեղինակը հիմնավորոևմ է ՀՀ վճռաբեկ դատարանի գործառութային լիազորությունների որոշակի բարելավում, մասնավորապես «դատական պլենումի» ինստիտուտի ներդրումը, որը մեր կարծիքով, էապես կբբարելավի նախ՝ օրենքների միատեսակ կիրառումը դատական բոլոր ատյաններում, երկրորդ՝ արդյունավետ եղանակով կուղղի անձի իրավունքներին և ազատություններին առնչվող դատական սխալները, երրորդ՝ կիստակեցնի դատական քաղաքականության ուղղությունները՝ քաղաքացիական, քրեական, վարչական, սնանկացման և հակակոռուպցիոն գործերի քննության և դատական ակտերի կայացման ոլորտներում:

Աշխատանքի երրորդ գլխի երրորդ ենթագլխում՝ **«Արդարադատության առանձին տեսակների ոլորտում վճռաբեկության սահմանափակման հիմնահարցերը»** վերնագրով հանգամանորեն խոսվում է վճռաբեկության կարգով սահմանափակումների հիմնախնդրին: Սույն հետազոտության շրջանակներում առաջարկվում է մինչդատական վարույթի նկատմամբ մասնագիտացված դատական վերահսկողության միջոցով բարձրացնել դատական ակտերի որակը և վճռաբեկ բողոքարկման առարկայի ծավալից միջանկյալ դատական ակտերը բացառելու և

ըստ այդմ վճռաբեկ դատարանի ծանրաբեռնվածությունը էապես թեթևացնելու հնարավորություն ընձեռել:

Կատարված հետազոտության արդյունքների հիման վրա հեղինակը հանգել է հետևյալ եզրակացությունների.

1. Արդարադատության ինստիտուտի պատմական վերլուծությունը ցույց է տալիս, որ ունենալով փիլիսոփայական-կրոնական բովանդակություն, թերևս իր ձևավորման ակունքներում եղել է պլատոնյան-ստոիկյան ուսմունքը, իսկ որպես ինստիտուցիոնալ երևույթ, այն իր շոշափելի զարգացումն է ստացել քրիստոնեական վարդապետական ուսմունքներում:

Եթե հնադարյան պետահիրավական հուշարձաններում արդարադատության և դատական իշխանության հասկացությունների բացակայությունը պայմանավորված էր իրավաբանական տեխնիկայի ցածր մակարդակով և կրոնաաստվածաբանական վարդապետությամբ, ապա ժամանակակից օրենսդրական ակտերում դրանց բացակայությունը, թերևս կարող է բացատրվել զուտ օրենսդրական ձևակերպումների, եզրույթների ոչ հստակ ամրագրմամբ, հաճախ նաև՝ իրավական հասկացությունների սահմանման նկատմամբ որոշակի պահպանողական մոտեցմամբ:

2.Դարեր շարունակ իրավունքի մշակույթում ձևավորված արդարադատության հասկացության առնչությամբ, բնականաբար, առանցքային էր համարվում այն հայեցակարգային մոտեցումը, ըստ որի արդարադատությունը կամ, ինչպես հաճախ օգտագործվել է «դատաստանը», ունենալով Աստվածային ծագում և իրականացվեով Աստծո կամքով, ուղեկցվում էր ոչ թե աշխարհիկ իշխանությունների, այլ բացառապես Աստծո առաջ անհատի պատասխանատվությամբ:

3.Քրիստոնեական վարդապետական ուսմունքում արդարադատության հայեցակարգը կենտրոնական տեղ է զբաղեցրել, սակայն Լուսավորության ժամանակաշրջանում արդարադատության վերաբերյալ հայեցակարգը էական էվոլյուցիա է ապրում և ձեռք է բերում աշխարհիկ-պետական բնույթ և

իշխանությունների բաժանման համակարգում առանձնանում է որպես ինքնուրույն իշխանության ճյուղ:

Պատմական այդ հեղաշրջումը արդյունք էր բուրժուադեմոկրատական հեղափոխությունների և իրավաբանական իրավահայեցողության երևան գալով:

Այդ ժամանակաշրջանից սկսած արդարադատության ինստիտուտը ժողովրդավարական հասարակությունում դարձավ մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության ամենաարդյունավետ պետական կառուցակարգ:

4.Արդարադատությունը բարդ սոցիալ-իրավական հասկացություն է, այդ պատճառով դրա իրականացման հետ կապված խնդիրները արդիական են, վիճելի և բազմաբնույթ՝ ընդգրկելով ոչ միայն դատական իշխանության ողջ շրջանակը, այլև պետության, հասարակության և մարդու իրավահարաբերությունները:

Գոյություն ունեցող արդարադատության վերաբերյալ հայեցակարգերի ողջ բազմազանությամբ հանդերձ կարելի է առանձնացնել արդարադատության ժամանակակից մոդելի հետևյալ հիմնական բնութագրական գծերը.

-արդարադատության իրականացում միայն դատարանի կողմից սահմանված ընթացակարգով.

-դատական գործերի քննարկում անկախ ու անկողմնակալ դատավորների կողմից.

- ճշմարտության պարզում.
- արդարության բացահայտում.
- անձի իրավունքների ու ազատությունների պաշտպանություն.
- բոլորի հավասարությունը օրենքի առջև.
- հակասությունների կարգավորում.
- դատավարության հրապարակայնություն.
- դատական պաշտպանության իրավունք.
- մրցակցություն.

- դատավարության պատշաճ ընթացակարգ,
- գթասրտություն
- դատական որոշումների հիմնավորում սահմանադրության, օրենքների ու դատական նախադեպերի միջոցով:

5.Արդարադատությունը կարելի է բնորոշել որպես պետության հատուկ մարմինների բացառիկ իրավազորություն, որն իրացվում է դատավարական ձևերով՝ սոցիալական վեճերի քննությանը և լուծմանը, ուղղված է մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանությանը և վերականգնմանը: Դատական իշխանությունն իրականացվում է արդարադատության ձևով (սահմանադրական, վարչական, քաղաքացիական և քրեական), և նրա հիմնական գործառույթը մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների ու ազատությունների պաշտպանությունն է:

6.Թվում է, թե արդարադատության և դատավարության իրավական սահմանումները պետք է օրենսդրորեն ամրագրվեն, դատավարական օրենսգրքերում պետք է հայտնվեն արդարադատությունը իմաստալից բնութագրող հոդվածներ՝ ցույց տալով դրա տարբերությունը դատական գործընթացներից: Այնուամենայնիվ, արդարադատության խնդիրները ՀՀ օրենսդրության մեջ չեն սահմանափակվում միայն կարգավորող իրավական ակտերում դրա համախմբման բացակայությամբ: Պատշաճի և արդարացի արդարադատության իրականացմանը խոչընդոտում են նաև նորմատիվ ակտերում առկա հակասությունները: Հաճախ լինում են դեպքեր, երբ օրենքի մի նորմը հակասում է մյուսին, կամ երբ գործող օրենքի նորմերը չեն համապատասխանում իրականությանը:

7.Դատարանների իրավակիրառ պրակտիկայի կատարելագործումը ենթադրում է հետևյալ պայմանների ստեղծում կամ եղածի բարելավում,

- դատարանների կողմից արդարադատության իրականացման գործում սահմանադրական սկզբունքների և նորմերի միասնական կիրառում,
- գործերի ժամանակին և ճիշտ քննարկման միջոցով մարդու և քաղաքացու

իրավունքների և ազատությունների պատշաճ պաշտպանություն,

- գործի շուրջ ոչ թե ֆորմալ, այլ արդարացի և ողջամիտ որոշում կայացնելը՝ որպես դատական գործընթացի առաջնահերթություն,
- օրենսդրության մեջ նորմերի բացակայության դեպքում անալոգիայի ինստիտուտի արդյունավետ օգտագործումը,

8. Հասարակությունում՝ արդարադատության իրականացումը պետք է լինի արդյունավետ: Պարզ է, որ արդարադատության արդյունավետության չափանիշը դինամիկ են ժամանակում և տարածությունում: Բոլոր դեպքերում, կարելի է առանձնացնել արդարադատության արդյունավետության հետևյալ չափանիշները.

Դատաիշխանական հարաբերություններն արդեն արդյունավետ են այն պատճառով, որ չնայած նրանց բնորոշ թերությունների համալիրին, որոշակի տեսակի կոնֆլիկտների լուծման մեջ նրան այլընտրանք գոյություն չունի:

Դատարանն արդյունավետ կլինի եթե նրա կողմից ընդունված որոշումները համապատասխանեն սոցիալական սպասումներին և սոցիալական արդարության պահանջներին:

9. Համաշխարհային իրավական տարածքում պետությունների ինտեգրման ընթացակարգերն օբյեկտիվորեն ենթադրում են, մի կողմից՝ արդարադատության տարբեր մոդելների ունիֆիկացման, մյուս կողմից, բազմամյա իրավակիրառական փորձով ստուգված արդարադատության ազգային առանձնահատկությունների պահպանման անհրաժեշտությունը:

10. Արդարադատության կողմից խնդիրների հաջող իրականացման համար, անհրաժեշտ են հետևյալ պայմանները.

ա) Յուրաքանչյուր առանձին վերցված պետությունում պետք է լինի դատարանի բնույթի, պետության մեխանիզմում դրա դերի պարզ հստակ և միասնական պատկերում:

բ) Դատարանին պետք է ամրագրված լինեն լիազորություններ՝ իրավունքի, այդ թվում դատական նախադեպի ստեղծագործական կիրառման նկատմամբ:

գ) Պետության բնակչության մոտ պետք է առկա լինի դատական կորպուսի նկատմամբ վստահություն:

դ) Արդյունավետ դատավարության կազմակերպման համար միայն մասնագիտացված դատավորները բավարար չեն, դատավարության գործընթացում մասնակցության հմտություններ պետք է ունենան նաև կողմերի ներկայացուցիչները:

ե) Դատական իշխանության մարմինները պետք է ունենան համապատասխան ոչ միայն կադրային, այլ նաև նյութական ապահովածություն:

զ) Դատական համակարգը պետք է հասանելի և մատչելի լինի բոլորի համար, ով ունի նրա կարիքը:

է) Դատարանների գործունեությունը պետք է տարբերակվի պարզությամբ և թափանցիկությամբ:

ը) Դատավարական օրենսդրությունը պետք է պարունակի դատական սխալների շտկման իդեալական, սակայն իրատեսական և օպտիմալ կառուցակարգ:

11. Վճռաբեկության կարգով բողոքարկման իրավունքի սահմանափակման միջոցով արդարադատության արդյունավետության բարձրացումն է, և նաև այդ համատեքստում Վճռաբեկ դատարանի կողմից օրենքի միատեսակ գործառույթի պատշաճ կիրառումն ապահովելը: Այս կապակցությամբ առաջարկում ենք կատարել հետևյալ փոփոխությունները գործող դատավարական օրենսդրության մեջ.

ա) սահմանափակել քաղաքացիական և վարչական որոշ գործերով վերաքննության իրավունքը, որպես բացառություն նախատեսելով այն դեպքը, երբ բողոք բերող անձն իր վերաքննիչ բողոքում հիմնավորում է, որ վարչական դատարանը թույլ է տվել արդար դատաքննության իրավունքի բուն էությունը խաթարող դատական սխալ:

բ) սահմանափակել քաղաքացիական և վարչական պարզ գործերով կայացված դատական ակտերի վերանայման արդյունքում ընդունված ակտերի վճռաբեկության կարգով բողոքարկումը,

գ) սահմանափակել քրեական գործերով վճռաբեկության կարգով հատուկ վերանայումը, ինչպես նաև ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանքների քննության վերաբերյալ առաջին ատյանի եզրափակիչ դատական ակտերի վերանայման արդունքում վերաքննիչ դատարանի կայացրած դատական ակտերի՝ վճռաբեկության կարգով վերանայումը:

12. Պայմանավորված հասարակական հարաբերությունների առաջընթացով, դրանց շրջանակում թվային տեխնոլոգիաների ներդրմամբ և լայնորեն կիրառմամբ օբյեկտիվորեն առաջ է գալիս նաև այդպիսի տեխնոլոգիաների և դրանցով պայմանավորված լուծումների օգտագործման անհրաժեշտություն հանրային կառավարման, այդ թվում՝ արդարադատության իրականացման համակարգի շրջանակներում՝ մասնավորապես, վերջին տարիներին մի շարք քայլեր են ձեռնարկվել հանրային կառավարման տարբեր էլեկտրոնային հարթակների ներդրման ուղղությամբ:

Մասնավորապես, էլեկտրոնային համակարգերի ներդրման համատեքստում, հատկապես արդարադատության ոլորտում կատարվել են շարք փոփոխություններ, ինչպես օրինակ՝ նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքը (www.e-draft.am), էլեկտրոնային դատավարության որոշ մոդուլներ, օրինակ, վճարման կարգադրություններ արձակելու համար դիմելու կառուցակարգերը: Այնուամենայնիվ, դեռևս շատ անելիքներ կան արդարադատության համակարգում էլեկտրոնային գործիքների բարելավման, նոր գործիքների ներդրման և դրանց միջոցով վարչարարության պարզեցման և ժամանակի խնայման ուղղությամբ:

13. Վերոնշյալ գործընթացների իրականացման արդյունքում էլեկտրոնային միասնական համակարգը կապահովի Էլեկտրոնային եղանակով փաստաթղթաշրջանառության իրականացումը, կնպաստի արդարադատության ոլորտի մարմիններում գործող համակարգերի վարման միասնական քաղաքականության մշակմանը, վիճակագրական համապարփակ տվյալների

հավաքագրմանը, ժամանակի, նյութական ռեսուրսների խնայողությանը և վարչարարության պարզեցմանը:

Անդրադառնալով «Էլեկտրոնային արդարադատություն» համակարգի առանցքային մաս կազմող «Էլեկտրոնային դատարան» համակարգին՝ պետք է նշել, որ ներկայումս Հայաստանի Հանրապետության դատական համակարգը չունի միասնական էլեկտրոնային համակարգ, որի շրջանակներում իրականացվեն բոլոր դատական վարույթները:

Առկա են մի քանի առանձին էլեկտրոնային գործիքներ, որոնք չեն կարող ապահովել դատավարության ամբողջ թվայնացումը, ինչի պայմաններում չի կարող արդյունավետ ներդրվել և գործել «Էլեկտրոնային արդարադատություն» միասնական կառավարման համակարգը:

Մեր կարծիքով «Էլեկտրոնային դատարան» կառավարման միասնական համակարգի ներդրումը կհանդիսանա առաջնային անհրաժեշտություն, ինչի իրագործումը հնարավորություն կընձեռի դատարանին և կողմերին վարույթի շրջանակներում, իրականացվող դատական գործառույթները և դատավարական գործողությունները իրականացնել էլեկտրոնային եղանակով:

Ատենախոսական աշխատանքի հիմնական դրութերն արտացոլվել են հեղինակի հետևյալ գիտական հրապարակումներում.

1. Ստեփանյան Նորայր, Արդարադոտության մարմինների ձևավորման պատմական զարգացման հիմնախնդիրները: Երևան, «Ստեփանյան Պրինտ», Երևան 2024, 180 էջ (մենագրություն):
2. Ստեփանյան Նորայր, Արդարադատության հայեցակարգը և էությունը//«Հիմնարար և կիրառական գիտական հետազոտություններ. արդիական խնդիրներ և ձեռքբերումներ»: Գիտական հոդվածների ժողովածու: Միջազգային գիտաժողով:3 մայիսի 2022: Երևան-2022, էջ 252-261:
3. Ստեփանյան Նորայր, Արդարադատության գաղափարների դոկտրինալ հիմնավորումը//«Օրինականություն» №130, 2022, էջ 52-56:
4. Ստեփանյան Նորայր, Արդարադատության սկզբունքները և դրանց նշանակությունը դատարանի խնդիրների լուծման գործում//Փիլիսոփայությունը արդի աշխարհում: Յունեսկոյի հռչակած փիլիսոփայության համաշխարհային

օրվա կապակցությամբ գիտական հոդվածների ժողովածու: Գիրք XII: Երևան, 2022, էջ 77-87 (համահեղինակ՝ Գ. Սաֆարյան):
5. Ստեփանյան Նորայր Արդարադատության մոդելները տարբեր երկրներում// «Օրինականություն», №126, 2021, էջ 51-55»:
6. Ստեփանյան Նորայր, Արդարադատությունը ժամանակակից օրենսդրական ակտերում: «Մրցունակ կրթության և գիտության հիմնախնդիրները հարափոփոխ աշխարհում»: Միջազգային գիտաժողով նվիրված Հյուսիսասային համալսարանի հիմնադրման 25-ամյակին: Երևան, 2021, էջ 57-64:
7. Ստեփանյան Նորայր,Արդարադատության սահմանադրական կարգավորման ժամանակակից մոդելների համեմատական իրավական վերլուծություն// «Դատական իշխանություն», №1-3 ()271-273), 2022, Հունվար-Մարտ: Երևան, էջ 28-37:
8. Ստեփանյան Նորայր, Պատիժը սոցիալական արդարադատության համակարգում// Փիլիսոփայությունը արդի աշխարհում: Յունեսկո-ի հռչակած Փիլիսոփայության համաշխարհային օրվա կապակցությամբ գիտական հոդվածների ժողովածու: Գիրք XII, Երևան, 2022, էջ 136-151:

АВТОРЕФЕРАТ

СТЕПАНЯН НОРАЙР ВАРУЖАНОВИЧ

Актуальные проблемы формирования и эволюционного развития органов правосудии

РЕЗЮМЕ

Актуальность диссертации в большей степени обусловлена повышением эффективности правосудия и необходимостью совершенствования наиболее надежных институтов и процедур защиты прав человека.

Об актуальности научных исследований вопросов, касающихся института правосудия, свидетельствует также наличие проблематики, обусловленной необходимостью совершенствования упомянутого института в процессе укрепления законности и борьбы с коррупцией.

Теоретический и практический интерес к упомянутым вопросам значительно возрос по той причине, что повышение эффективности правосудия в новом качестве обусловлено также стратегией судебных и правовых реформ Республики Армения на 2022-2026 годы, в которой, в частности, отмечается, что необходимо осуществить скоординированные меры, направленные на повышение независимости, беспристрастности и доверия общества к судебной системе, облегчение нагрузки на суды, улучшение материального и процессуального законодательства, внедрение единой системы управления электронным правосудием и другие необходимые меры, которые внесут существенный вклад в совершенствование и развитие судебной системы Армении.

К числу этих мер также необходимо отнести проведение всесторонних научно-теоретических и комплексных исследовательских работ, в которых должны быть отражены научно обоснованные рекомендации по улучшению и повышению эффективности правосудия.

Концепция правосудия как атрибута демократической культуры была и остается в центре внимания научных и политических интересов.

Научная новизна работы заключается в том, что были всесторонне и системно изучены сущность, содержательные особенности, современные концептуальные подходы института правосудия, проблемы повышения эффективности в контексте процессуальных реформ. В работе автор обосновал необходимость внедрения "электронного правосудия" в систему судебной власти, а также обоснования

ограничения кассации по отдельным видам дел, а также выявил актуальные вызовы и проблемы правосудия и наметил пути их адекватного решения. Автор также провел системный анализ теоретических и прикладных задач повышения эффективности правосудия и на основании полученных результатов сформулировал конкретные рекомендации в этом направлении.

Миссия правосудия заключается не только в разрешении социально-правовых споров, но и в обеспечении социальной справедливости в пределах своей компетенции, заполнении правовых пробелов и устранении правовой неопределенности в рамках свободного усмотрения и здравого смысла. Посредством правосудия судебная власть выполняет две исключительные функции: 1) рассматривает и разрешает дело по существу; 2) осуществляет судебный контроль за законностью действий (бездействия) должностных лиц и органов других ветвей государственной власти, решений нижестоящих судебных органов. Судебный контроль - одна из тех важных функций, эффективным осуществлением которой обусловлено становление правового государства в нашей стране.

Теоретические положения и выводы, зафиксированные в диссертации, позволяют углубить знания и понимание сущности и содержательных особенностей правосудия. Положения диссертации могут быть использованы в деле совершенствования системы органов судебной власти и повышения эффективности правосудия.

RESUME
NORAYR VARUZHAN STEPANYAN
SUMMARY

Stepanyan Norayr s/o Varuzhan
Current issues of formation and evolutionary development of justice bodies

The relevance of the dissertation is largely due to the increase in the efficiency of justice and the need to improve the most reliable institutions and procedures for the protection of human rights.
The existence of problematic issues due to the need to improve the said institution in the process of strengthening the legality and fighting corruption also testifies to the relevance of the scientific research of the questions related to the institution of justice.
The theoretical and practical interest in the mentioned issued has increased significantly considering that the increase in the new quality of the efficiency of justice is also conditioned by the strategy of judicial and legal reforms of the Republic of Armenia for 2022-2026, in which it is specifically stated that it is necessary to carry out systematic measures aimed at the independence of the judicial system. increasing public trust in impartiality and the judicial system, easing the workload of the courts, improving substantive and procedural legislation, introducing a unified electronic justice management system and other necessary measures that will significantly contribute to the improvement and development of the judicial system of the Republic of Armenia.
Among those measures, it is necessary to include the implementation of scientific-theoretical comprehensive and complex research works, which should reflect scientifically substantiated recommendations for improving justice and increasing efficiency.
The concept of justice as a feature of democratic culture has been and remains the center of attention of scientific and political interests.
The scientific novelty of the work lies in the fact that the essence of the institution of justice, its substantive features, modern conceptual approaches, problems of increasing efficiency in the context of judicial reforms were subjected to a comprehensive and systematic study.
In the work, the author justified the need to introduce "electronic justice" into the system of judicial power, as well as the justifications for the limitation of cassation in cases of

certain types of justice, as well as identified the current challenges and problems of justice and outlined the ways of their adequate solution.

The author also conducted a systematic analysis of theoretical and applied problems of increasing the efficiency of justice and, based on the results obtained, formulated specific recommendations in this direction.

The mission of justice is not only the resolution of social-legal disputes, but also the provision of social justice within the limits of its competence, the filling of legal gaps and the elimination of legal uncertainties within the limits of free discretion and common sense.

Through justice, the judiciary performs two unique functions: 1) examines and resolves the case on its merits,2) carries out judicial control over the legality of decisions of actions (inaction) of officials and bodies of other branches of state power, subordinate judicial bodies. Judicial control is one of the important functions, the effective implementation of which determines the establishment of a legal state in our country.

The theoretical propositions and conclusions laid down in the dissertation allow to deepen the knowledge and understanding of the essence and substantive features of justice.

The principles of the dissertation can be used in improving the system of judicial authorities and increasing the efficiency of justice.